

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2016  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ  
ՀԱՐՑԱՏՈՄՍ  
10 - րդ դասարան

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (17 միավոր)

1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (12 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 8-րդ առաջադրանքներ: (0,5 X 8 = 4 միավոր)

1. Ե՞րբ է թագավոր հռչակվել Անտիոքոս I Երվանդակյանը.

- |                |                |
|----------------|----------------|
| 1) Ք. ա. 94 թ. | 3) Ք. ա. 80 թ. |
| 2) Ք. ա. 70 թ. | 4) Ք. ա. 65 թ. |

2. Խորենացին ո՞ւմ է մեծարել «այր իմաստուն և բանաստեղծ» խոսքերով.

- |                    |             |
|--------------------|-------------|
| 1) Արտավազ II      | 3) Վրույր   |
| 2) Օղյունյաց քուրմ | 4) Բարդաճան |

3. Որքա՞ն էր Անիի Բագրատունյաց թագավորության բանակի թիվը պատերազմների ժամանակ.

- |                 |                  |
|-----------------|------------------|
| 1) 60–70 հազար  | 3) 120–130 հազար |
| 2) 90–100 հազար | 4) 140–150 հազար |

4. Ե՞րբ է Լևոն Մեծագործը գրավել Անտիոքը և իշխանությունը հանձնել Ռայմոնդ–Ռուբենին.

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1219 թ. | 2) 1202 թ. | 3) 1198 թ. | 4) 1216 թ. |
|------------|------------|------------|------------|

5. Ո՞ր գավառում էր գտնվում Արծափ ամրոցը.

- |            |             |
|------------|-------------|
| 1) Ծաղկոտն | 3) Բասեն    |
| 2) Կոզովիտ | 4) Ռշտունիք |

6. Ե՞րբ է ՀՀ–ն դարձել ՄԱԿ–ի լիիրավ անդամ.

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) 1993 թ. ապրիլի 2–ին | 3) 1992 թ. մարտի 2–ին  |
| 2) 1991 թ. մարտի 2–ին  | 4) 1992 թ. մայիսի 2–ին |

7. Իշխուհինի օրոք ո՞ր երկիրը ներառվեց Վանի թագավորության մեջ.

- 1) Պարսուա
- 2) Արդինի-Մուսասիր
- 3) Դիաուլի-Դայան
- 4) Ալզի

8. Ո՞ր արքայի մասին է հույն պատմագիր Պոլիբիոսի ստորև բերվող արտահայտությունը.

*«Արմենիայի մեծագույն մասի տիրակալ»:*

- 1) Պարույր
- 2) Տիգրան Երվանդյան
- 3) Տիգրան II
- 4) Արտաշես I

*բ. Լրացնել պատասխանը. (1 X 4 = 4 միավոր)*

1. VII դ. երկրորդ կեսի հայոց իշխանների անունները դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.

- ա. Աշոտ Բագրատունի
- բ. Սմբատ Բագրատունի
- գ. Համազասպ Մամիկոնյան
- դ. Ներսեհ Կամսարական
- ե. Թեոդորոս Ռշտունի
- զ. Գրիգոր Մամիկոնյան

1	2	3	4	5	6

2. Հայոց կաթողիկոսների անունները դասավորել ըստ գահակալման ժամանակագրական հաջորդականության

- ա. Մեսրոպ Արտազեցի
- բ. Ստեփանոս Հռոմկլայեցի
- գ. Կոստանդին Լամբրոնացի
- դ. Պողոս Սսեցի
- ե. Հովհաննես Սսեցի
- զ. Կոստանդին Կեսարացի

1	2	3	4	5	6

**3. Չաքարյանների վասալ իշխանությունների տիրույթները համապատասխանեցնել դրանց տիրող իշխանական տոհմի անվանը.**

- |                      |                             |
|----------------------|-----------------------------|
| 1. Հասան-Ջալալյաններ | ա. Արագածոտն                |
| 2. Վահրամյաններ      | բ. Սյունիք                  |
| 3. Օրբելյաններ       | գ. Վայոց ձոր                |
| 4. Վաչուտյաններ      | դ. Արցախ (Խաչեն)            |
| 5. Պռոշյաններ        | ե. Կոտայք, Սևանի ավազան     |
|                      | զ. Փառիսոս, Տավուշ, Գարդման |

1	2	3	4	5

**4. Երկիրը համապատասխանեցնել թագավորի անվանը.**

- |                       |                        |
|-----------------------|------------------------|
| 1. Տիգրան II          | ա. Եգիպտոս             |
| 2. Միհրդատ VI Եվպատոր | բ. Սելևկյան պետություն |
| 3. Արտանես            | գ. Կապադովկիա          |
| 4. Միհրդատ II         | դ. Մեծ Հայք            |
| 5. Պտղոմեոս XI        | ե. Պոնտոս              |
| 6. Անտիոքոս IV        | զ. Ծոփք                |
|                       | է. Պարթևստան           |

1	2	3	4	5	6

**գ. Լրացնել պատասխանը: (1 X 4 = 4 միավոր)**

1. Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում ժամանակագրական հաջորդականությունը. (0,5 X 2 = 1 միավոր)

- Հակահռոմեական հուժկու ապստամբությունը Գիսակ Դիմաքսյանի գլխավորությամբ
- Վաղարշի և Տրդատի գլխավորած պարթևական զորքի մուտքը Հայաստան և Հռոմամիզդի վտարումը
- Հայ-պարթևական միացյալ ուժերի զլուխն անցած Տրդատի մուտքը Արտաշատ և նստելը հայոց գահին
- Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնի ամրոցում
- Արտաշատ քաղաքի ավերումը Կորբուլոնի կողմից
- Հռոմեական լեգեոնների պարտությունն ու նվաստացումը Հռանդեայում

- 7. Հակահոմեական հուժկու ապստամբությունը և Արտագերս ամրոցի հերոսական դիմադրությունը
- 8. Տրդատ I-ի թագադրումը Ներոնի կողմից
- 9. Մծուրք քաղաքի հիմնադրումը
- 10. Հայոց Վաղարշ I Արշակունու գահակալության սկիզբը

--	--

**2. Նշված n ր գործառույթները չէր տնօրինում պայլը Կիլիկյան Հայաստանում.**

**(0,5 X 2 = 1 միավոր)**

- ա. թագավորի խորհրդականն էր և արքունի պալատի կառավարիչը
- բ. թագավորի բացակայության դեպքում փոխարինում էր նրան
- գ. թագավորի խորհրդականն էր և ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ
- դ. թագավորի անչափահասության դեպքում իրականացնում էր ամբողջ երկրի և գահակալի խնամակալությունը
- ե. թագավորի առաջին խորհրդականն էր

--	--

**3. Գտնել ճիշտ պնդումները.**

**(0,5 X 2 = 1 միավոր)**

ա. Տրդատ I-ի 22-ամյա գահակալության ընթացքում միջազգային ասպարեզում Հայաստանի վիճակը կայունանում է:

բ. Մծուրք քաղաքը հիմնադրվել էր Արևմտյան Եփրատի ափին՝ Մշո դաշտում, որտեղով անցնում էր Տիգրանակերտից Անտիոք գնացող առևտրական և ռազմական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհը:

գ. Հռոմեական կայսրությունում մղված գահակալական կռիվների ընթացքում չեզոքություն պահպանած հայոց Վաղարշ II թագավորը բանակցությունների միջոցով հաշտություն է կնքում հաղթանակած թեկնածուի և Հռոմի նոր կայսր Սեպտիմիոս Սևերոսի հետ:

դ. Տրդատ II-ի գլխավորած պայքարը Սասանյանների դեմ հաջողությամբ պսակվեց, և պարթև Արշակունիներին ոչ միայն հաջողվեց փրկվել բնաջնջվելուց, այլև նրանք վերականգնեցին Պարթևական թագավորությունը:

ե. Մծբինում կնքված հռոմեա-պարսկական 40-ամյա խաղաղության պայմանագրով Սասանյան Շապուհ I թագավորը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը և պարտավորվեց չմիջամտել Հայաստանի ներքին գործերին:

--	--

**4. Պնդումներից ընտրել երկուսը, որոնք տեղ չեն գտել Ամասիայի հաշտության պայմանագրում. (0,5 X 2 = 1 միավոր)**

- ա. Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև դադարեցվելու էին պատերազմական գործողությունները,
- բ. Արևելյան Հայաստանն անցնելու էր Սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ,
- գ. Արևմտյան Հայաստանն անցնելու էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ,
- դ. Պարսկաստանը վճարելիք ռազմատուգանքի դիմաց հետ էր ստանալու Բաղդադը,
- ե. Օսմանյան կայսրությունը, հոգուտ Պարսկաստանի, հրաժարվելու էր Միջագետքից:

--	--

**2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 միավոր)**

**ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – ընտրելիքները: (0,5 X 4 = 2 միավոր)**

**1. Խեթական ո՞ր արքան Խաթրուսարը դարձրեց մայրաքաղաք:**

- 1) Խաթրուսիլիս II
- 2) Լարարնա I
- 3) Թուղխալիաս II
- 4) Խաթրուսիլիս I

**2. Ո՞վ էր Հայկական արքայատոհմի հիմնադիրը Բյուզանդիայում:**

- 1) Լևոն I–ը
- 2) Վասիլ I–ը
- 3) Կոստանդին Ծիրանածինը
- 4) Հուստինիանոս I–ը

**3. Ո՞ր երկրում առաջինը սկսվեց տնտեսական մեծ ճգնաժամը:**

- 1) Մեծ Բրիտանիա
- 2) ԱՄՆ
- 3) Գերմանիա
- 4) Ֆրանսիա

**4. Ե՞րբ է Հենիխ IV–ը հրապարակել Նանտի էդիկտը:**

- 1) 1562 թ.
- 2) 1572 թ.
- 3) 1594 թ.
- 4) 1598 թ.

*բ. Լրացնել պատասխանը (1 X 2 = 2 միավոր)*

1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.  
(1 միավոր)

- ա) Սրբազան հռոմեական կայսրության ստեղծումը
- բ) Արաբների պարտությունը Պուատիեի ճակատամարտում
- գ) Ազատությունների մեծ հրովարտակի ստորագրումը Հովհան Անհողինի կողմից
- դ) Վորմսի համաձայնագրի ստորագրումը
- ե) Վերդենի դաշնագրի կնքումը
- զ) Պապի աշխարհիկ պետության ստեղծումը

1	2	3	4	5	6

2. Համապատասխանեցրե՛ք իրադարձությունները տարեթվերի հետ:

(1 միավոր)

- 1) 1950–1953 թթ.
- 2) 1978–1979 թթ.
- 3) 1980–1988 թթ.
- 4) 1964–1973 թթ.
- 5) 1989–1990 թթ.

- ա) Իրանա–իրաքյան պատերազմը
- բ) Վիետնամա-ամերիկյան պատերազմը
- գ) Խորհրդա-աֆղանական պատերազմը
- դ) «Թավշյա հեղափոխությունները» Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներում
- ե) Քաղաքացիական պատերազմը Կորեայում
- զ) Հեղափոխությունը Իրանում

1	2	3	4	5

գ. *Լրացնել պատասխանը.*

(0,5 X 2 = 1 միավոր)

1. Նշվածներից որո՞նք չեն հանդիսանում Սոլոնի բարեփոխումների հետևանքներ:

ա. Վերացվեց պարտային ստրկությունը:

բ. Ստեղծվեց Աթենական ծովային միությունը:

գ. Մտցվեց օստրակիզմի համակարգը, ստեղծվեց 10 ստրատեգոսների խորհուրդը::

դ. Քաղաքացիություն ստացան Աթենքում մշտապես բնակվող օտար պոլիսների ներկայացուցիչները:

ե. Ատտիկայում մտցվեց գույքային ցենզ, ինչը ծանր հարված հասցրեց տոհմատիրական կարգերին:

զ. Կատարվեց դատական բարեփոխում, որի արդյունքում ստեղծվեց ատենակալների դատարանը:

--	--

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (3 միավոր)

1. Ներկայացրե՛ք Թորոս II-ի և Մլեհի գործունեության կարևոր դրվագները: Ի՞նչ հաջողություններ ունեցավ Կիլիկիան նրանց կառավարման տարիներին: Ներկայացրե՛ք և գնահատե՛ք Լևոն II Ռուբինյանի գործունեությունը:

Է. Մինասյան  
Պատմության հանձնաժողովի նախագահ,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

12. 04. 2016 թ.